

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

9.1. ՂԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ՝

- Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչ,
- Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ,
- Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ,
- Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների դասակարգիչ,
- Զբաղմունքների դասակարգիչ,
- Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ,
- Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչ,
- Հիմնական ֆոնդերի վիճակագրական դասակարգիչ,
- Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ

9.2. Միջազգային մեթոդաբանական ուղեցույցներ և ձեռնարկներ

- Ազգային հաշիվների համակարգ, 2008 ,
- Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն. հիմնադրույթներ և սահմանումներ, 2010,
- Արդյունաբերողների գների ինդեքսի ձեռնարկ,
- Արդյունաբերության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008,
- Արտահանման և ներմուծման գների ինդեքսի ձեռնարկ, 2009,
- Ազգային հաշիվներում գների և ծավալների չափման ձեռնարկ, 2001,
- Եռամսյակային ազգային հաշիվներ, 2001,
- Եվրոպական հաշիվների համակարգ, 1995,
- Զբոսաշրջության սատելիտային հաշիվ, 2008,
- Զբոսաշրջության վիճակագրության միջազգային ուղեցույց, 2008,
- Ծառայությունների միջազգային առևտրի վիճակագրության ձեռնարկ, 2004 ,
- Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ, 2001,
- Կարճաժամկետ բիզնես վիճակագրության մեթոդաբանություն, 2006,
- Միջազգային միգրացիայի վիճակագրության ուղեցույց, 1998,
- Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2000,
- Մշտական գներով համախառն ներքին արդյունքի գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղեցույց, 2005,
- Չդիտարկվող տնտեսության չափման ուղեցույց, 2002,
- Սպառողական գների ինդեքսների հաշվարկման կիրառական ուղեցույց, 2009,
- Վճարային հաշվեկշռի ձեռնարկ, 5-րդ խմբ.,
- Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումների դիրքի ձեռնարկ, 6-րդ խմբ.,
- Օտարերկրյա ուղղակի ներդրումների ՏՁՀ ստանդարտ սահմանում, 4-րդ խմբ., 2008,
- «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառման Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներ», 2006,
- Արտաքին պարտքի վիճակագրություն, Ուղեցույց կազմողների և օգտագործողների համար, 2014 ,
- Տեղեկատվական տնտեսության վերաբերյալ վիճակագրության արտադրման ուղեցույց, Միավորված Ազգերի առևտրի և զարգացման գծով կոնֆերանս, Միավորված Ազգերի հրապարակում, 2007 ,
- Մեթոդաբանական նշումներ ինվազիայի վիճակագրության վերաբերյալ ,
- Էներգետիկայի վիճակագրության վերաբերյալ ուղեցույց

9.3. Ազգային հաշիվների համակարգ

- Արմատատը սկսած 2014թ.-ից Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրության բնագավառում աշխատանքներ է իրականացրել «Ազգային հաշիվների համակարգ 1993-ից» «Ազգային հաշիվների համակարգ 2008-ին» (ԱՀՀ 2008) անցում կատարելու ուղղությամբ, ինչը ենթադրում է նաև ԱՀՀ 2008-ի ներդրումը համապատասխան Եվրոպական հաշիվների համակարգ 2010-ի (ԵՀՀ 2010) ձևաչափով: Սկսած 2015թ.-ից Հայաստանի ազգային հաշիվների վիճակագրությունը վարվում է համաձայն ԱՀՀ 2008 մեթոդաբանության, համաձայն որի վերանայվել են նաև 2012-2014թթ. ԱՀՀ ցուցանիշները: ԱՀՀ 2008-ը պատրաստվել և հրապարակվել է միջազգային 5 կազմակերպությունների (Եվրոստատ, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀՀԿ), Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վիճակագրական բաժին և ՄԱԿ-ի քարտուղարության տարածաշրջանային հանձնաժողովներ, Համաշխարհային բանկ (ՀԲ) հովանու ներքո և 2009թ. փետրվարին Նյու-Յորքում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 40-րդ նստաշրջանում ընդունվել որպես համընդհանուր ստանդարտ:

9.4. Հիմնական փաստաթղթեր

- ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ (1994-2013թթ.),
- ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներ (վերանայված ներածական, 2013թ.),
- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք (ընդունված 2005թ. փետրվարի 24-ին),
- Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք (ընդունված 2011թ. սեպտեմբերի 28-ին),
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոչակագիր,
- Միջազգային վիճակագրական ինստիտուտի պրոֆեսիոնալ էթիկայի հոչակագիր,
- Միջազգային վիճակագրական գործունեության կառավարման սկզբունքներ (անգլերեն)

9.5. Սկզբունքներ

- Արմատատի գործունեությունը խարսխված է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության 10 հիմնարար սկզբունքների (ընդունված՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.1994թ.) և առաջնորդվում է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից 1994թ.-ին հաստատված և 2013թ.ին վերահաստատված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներով և դրանց վրա խարսխված Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից 2017թ.-ի նոյեմբերի 16-ին ընդունված Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի սկզբունքներով:

9.6. Միջազգային համաձայնագրեր

- Ղրղզստանի Հանրապետություն (ստորագրված՝ 21.04.1997թ. վավերացված՝ 07.05.1998թ.)
- Տաջիկիստանի Հանրապետություն (ստորագրված՝ 10.03.1998թ. վավերացված՝ 20.09.1999թ.)
- Ռուսաստանի Դաշնություն (ստորագրված՝ 14.05.1999թ. վավերացված՝ 20.09.1999թ.)
- Բուլղարիա (ստորագրված՝ 01.12.1999թ., վավերացված՝ 08.03.2000թ.)
- Բելառուս (ստորագրված՝ 20.09.2000թ., վավերացված՝ 28.12.2000թ.)
- Համաձայնագիր Եվրոստատի և ՀՀ վիճակագրության միջև արտաքին առևտրին վերաբերող վիճակագրական տվյալների փոխանակման մասին (ստորագրված՝ 23.02.1999թ., վավերացված՝ 20.09.1999թ.)
- Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ, ԱՊՀ միջպետական վիճկոմի, ՌԴ վիճպետկոմի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին (ստորագրված՝ 17.12.2003թ.)
- Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ և ԱՊՀ միջպետական վիճկոմի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրման ծրագրի Գլոբալ ռաունդի շրջանակում 2011թ. ՀՆԱ-ի միջազգային համադրումների իրականացման մասին (ստորագրված՝ 09.04.2010թ.)
- Փոխըմբռնման Հուշագիր Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և INOGATE տեխնիկական քարտուղարության միջև վիճակագրական համագործակցության մասին (ստորագրված՝ 02.07.2013թ.)
- Փոխըմբռնման Հուշագիր Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության և Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի միջև համագործակցության մասին (ստորագրված՝ 06.12.2013թ.)
- Մտադրության նամակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև մի կողմից և Եվրոպական բնապահպանական գործակալության՝ մյուս կողմից (ստորագրված՝ 30.06.2014թ.)
- Մտադրության նամակ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև մի կողմից և Եվրոպական բնապահպանական գործակալության՝ մյուս կողմից (ստորագրված՝ 13.09.2017թ.)

9.7. Տվյալների տարածման ընդհանուր համակարգ

- ԱՄՀ վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով 1997թ. դեկտեմբերի 19-ին հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգը, որին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2001 թվականի մարտի 29-ին:

9.8. Տվյալների տարածման հատուկ ստանդարտ

- 2003թ. նոյեմբերի 7-ից Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SS<U>)՝ դրանով իսկ դառնալով վիճակագրության բնագավառում կիրառվող միջազգային ամենախիստ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը: Համաձայն SS<U>-ի պահանջների, համակարգին անդամակցող բոլոր երկրների վիճակագրական տեղեկատվությունը նկարագրող մեթոդաբանական տվյալները (մեթատվյալները)՝ նախապես մշակված ձևաչափերի միջոցով, տեղադրվում են Արժույթի միջազգային հիմնադրամի կայքի՝ հատուկ այդ նպատակով բացված էջում: Նշված կայքը նպատակ ունի հանրությանն առավել լայն հնարավորություններ ընձեռել՝ ծանոթանալու ցանկացած երկրի վիճակագրական տեղեկատվության համակարգի բաղկացուցիչ մասը կազմող, պարբերաբար արդիականացվող հիմնական

մակրոցուցանիշներին, ինչպես նաև դրանց մշակման մեթոդաբանական մոտեցումներին: ՏՏՀ-ն բովանդակում է այն մշտական պահպանման խիստ պահանջները, ինչի վերաբերյալ տեղեկությունը հրապարակայնորեն առկա է ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում: Տեղեկագիրը ներառում է անգլերեն համապարփակ փաստաթղթեր ՏՏՀ տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է պաշտոնական կայքում այդ նպատակով վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները: Նույն կայքում տեղադրվում են նաև մեթատվյալների հայերեն և ռուսերեն տարբերակները:

9.9. Փաստաթղթավորում և որակ

- Արմատատի որակի քաղաքականություն (հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի թիվ 17- Ա որոշմամբ),
- Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ, տարբերակ 1.2 (հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016թ. նոյեմբերի 21-ի թիվ 31-ա որոշմամբ),
- Որակի հոչակագրերը նկարագրում են վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակը և մեթոդաբանությունը, դրա տարածումը և վիճակագրության օգտագործողների և նրանց մոտ առաջացող հարցերի փարատման համար այլ կարևոր տեղեկատվություն: Որակի հոչակագրերը մշակվել են յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար, վիճակագրական 17 բնագավառների ներքո առկա է 139 արտադրանք: Որակի հոչակագրերն ըստ առանձին արտադրանքների հրապարակված են պաշտոնական կայքում: Աշխատանքն իրականացվել է որպես Եվրամիության ԹՎինինգ ծրագրի վիճակագրությունում «Որակի կառավարում» բաղադրիչի մի մաս: Թեման մանրամասն նկարագրված է «Տվյալների որակի գնահատում և գործիքներ» ձեռնարկում՝ http://epp.eurostat.ec.europa.eu/portal/page/portal/quality/quality_reporting և «Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոչակագրում» (անգլերեն)։
- ✓ Էկոնոմիկա և ֆինանսներ,
- ✓ Բնակչություն և սոցիալական գործընթացներ,
- ✓ Արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ,
- ✓ Տրանսպորտ և Զբոսաշրջություն,
- ✓ Արտաքին առևտուր,
- ✓ Գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնաբուծություն,
- ✓ Պարենային ապահովություն,
- ✓ Շրջակա միջավայր և էներգետիկա,
- ✓ Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդել (տարբերակ 5.0) (հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016թ. նոյեմբերի 21-ի թիվ 30- ա որոշմամբ)
- ✓ Էկոնոմիկա և ֆինանսներ,
- ✓ բնակչություն և սոցիալական գործընթացներ,
- ✓ արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ,
- ✓ տրանսպորտ և զբոսաշրջություն,
- ✓ արտաքին առևտուր,
- ✓ գյուղատնտեսություն, անտառաբուծություն և ձկնաբուծություն,
- ✓ պարենային ապահովություն,
- ✓ շրջակա միջավայր և էներգետիկա

9.10. Հայաստանի ՀՋՆ ցուցանիշներ

- Հայաստանի ՀՋՆ ցուցանիշներ
- Արմենիաինֆո տվյալների բազան Հայաստանի ՀՋՆ ցուցանիշներով՝ <http://www.armdevinfo.am/> կայքում
- ԶեՌՆԱՐԿ «Արմենիաինֆո - ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ, 2011»

9.11. Հայաստանի ԿՋՆ ցուցանիշներ

Ուսումնասիրելով ԱՄՆ ԿՋՆ-ի ցուցանիշների համար Ազգային հաշվետվողական հարթակ մշակելու փորձը և ուսուցողական նյութերը, Արմատատը մշակել է նմանատիպ հարթակ Հայաստանի համար, որը հանդիսանում է ինտեգրված կայք (տվյալների բազաներ և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածք, միտված տեղեկատվության հավաքագրմանը, պահպանմանը և տարածմանը): Հարթակը գլոբալ կայուն զարգացման նպատակների ցուցանիշների համար ազգային վիճակագրության, մեթատվյալների և հարակից տեղեկատվության գործիք է: ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին համապատասխանելու համար հարթակն ունի հետևյալ նվազագույն հատկանիշները.

- կառավարվում է Արմատատի կողմից,
- պարունակում է պաշտոնական վիճակագրություն և մեթատվյալներ (համաձայն հաստատված ստանդարտ մեթոդաբանության),
- հրապարակայնորեն հասանելի է,
- հետադարձ կապի հնարավորություն է ընձեռում օգտագործողների համար,

- հանդիսանում է բաց աղբյուր (անվճար) տեխնոլոգիա,
- սույն հարթակը մշակվել է Արմատատի կողմից ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ:

9.12. Ուեսպոնդենտների համար

- Վիճակագրական հաշվետվությունների ներկայացման ընթացակարգ,
- Հաշվետվությունների փնտրման համակարգ,
- Վիճակագրական հաշվետվությունների ձևեր,
- Վարչարարություն,
- «Ի՞նչ է վարչական ռեգիստրը»

9.13. Վիճակագրության տարածում

Արմատատը մշտապես հաշվի առնելով վիճակագրական տվյալների առավել լայն տարածման անհրաժեշտությունը և որպեսզի շարունակականորեն ընդլայնի վիճակագրական տեղեկատվության տարածումը, ինչպես նաև բարելավվի վերջինիս որակն ու օգտագործման հարմարավետությունը, մշակել է տարածման հստակ ռազմավարություն և քաղաքականություն.

- տեղեկատվության տարածման և հաղորդակցության քաղաքականություն,
- տեղեկատվության տարածման և հաղորդակցության ռազմավարություն,
- պաշտոնական կայքում մշտապես գետեղվում են վիճակագրական հրապարակումները (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումներ և մեթոդաբանական պարզաբանումներ:
- միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրազեկ լինելու նպատակով գրադարանում ստացվում և պահպանվում են միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրապարակումներ:
- վիճակագրական հիմնական ցուցանիշների սահմանումները, հաշվարկման մեթոդաբանությունը, չափորոշիչները և այլ համապատասխան տեղեկատվությունը գետեղվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումների «Հավելված 3» հատվածում: Հատվածը մշտապես նորացվում է միջազգային չափանիշներին համապատասխան, ավելացվում են նոր ցուցանիշներ և տրվում դրանց նկարագրությունները և սահմանումները: Ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումները՝ առանձին հատվածների տեսքով, գետեղվում են նաև վիճակագրական ժողովածուներում, տեղեկագրերում, տարեգրքերում և այլն:
- վիճակագրական հրատարակությունների պաշտոնական լեզուն հայերենն է: Վիճակագրական ծրագրով նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում հրատարակությունները մեծամասամբ իրականացվում են նաև ռուսերեն և/կամ անգլերեն լեզուներով: Տարընթերցությունների առկայության դեպքում վերահսկիչ տարբերակը (օրինակը) հայերեն լեզվով տարբերակն է:
- պաշտոնական կայքում վիճակագրական հրատարակությունները, ինչպես նաև տվյալների բազաները գետեղում են MS word, և/կամ MS excel, Adobe Acrobat PDF տարբերակներով: